նակեց Հուզայֆայ Ի. Եաման Ալաբսի'ն։ Հաբիբ մեկնեցաւ Պարտաւ եւ ուղարկեց իւր օգնակիցներր (հարկահաններր) այս քաղաքի եւ Կարինի մէջ եղած գաւառներր, որպէս եւ Խայդան ապա նորան հասաւ Օսմանի թուղթը, որով նա հրամայում էր նորան հեռանալ այնտեղից եւ փոխանորդ նշանակել Սալտ Ի. Զուֆար Ալաբսին, որ նորա հետ էր. Հաբիբ կատարեց հրամանը եւ վերադարձաւ Ասորիք, ապաստակ սփռելով Ցունաց հողերի վերայ, եւ բնակեցաւ Հիմսում.[1] այստեղից Մուավիան փոխադրեց նորան Դամասկոս, որտեղ նա վախճանեցաւ 42 թ. 35 ամայ։ Մուավիան ուղարկած էր նորան Ջայշ[2] Օսմանին օգնութեան, երբ սա պաշարուած էր, բայց՝ գալով Վադի'լկուրայ[3] նորան հասաւ Օսմանի սպանման բոթը, ուստի յետ դարձաւ։

Օսման կառավարիչ նշանակեց Ատրպատականի եւ Հայաստանի վերայ Մուղիրայ Ի. Շուբայ'ին, բայց ապա հեռացրեց նորան եւ կարգեց (նորա փոխարէն) Հայաստանի վերայ Քասմ Ի. Ռաբիայ Ի. Ումայայ Ի. աբի Սալտ Ազդաֆի'ն, իսկ բուն այլոց՝ Ամր Ի. Մուաւիայ Ի. Մուհտաֆիկ Օքայլի'ն. ոմանք պատմում են, որ ալ Մուղիրայ'ից յետոյ կառավարեց Հայաստանի վերայ Կիլաբ ցեղից մէկը 15 Ղարի, ապա Օքայլը, ապա Աշ'ազ Ի. Քայս՝ Ալի Ի. աբի Ցալիբի ժամանակ Հայաստանի եւ Ատրպատականի վերայ. ապա Աբդալլահ Բ. Հատիմ Բ. Նուման Ի. Ամր Ալբահլի՝ Մուաւիայի ժամանակ (656—679) եւ այստեղ էլ վախճանեցաւ. որին յաջորդեց Նորա եղբայրը՝ Աբդու'լ Ազիզ Ի. Հատիմ Ի. Նուման, որ նորոգեց եւ ամրացրեց Դուին քաղաքը, ընդարձակեց նորա տաճարը (մեսջիդը), շինեց նախի-

---

1 Emessa Ասորիքում։

2 Մեդինայի շրջակայքում։

3 Մեդինայից 5 մղոն հեռու դէպի հիւսիս։